


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|------------------|--------|
| Պուշկարիոյ համար | 12 ֆր. |
| սարեկան | 7 » |
| Վեցամսեայ | 15 » |
| Արտասահմանի | 8 » |
| համար սարեկան | 3 ֆր. |
| Վեցամսեայ | 1.50 » |

Ծանուցում սոցր ա-
տուարին երեսին համար
40 սանիթի իսկ վերջին
երեսին համար 20 սան-
թիս է. երեքին սեղի
սեփախանքի համար
20 0/0 զեղը կըլայ:

Վառնայի համար մե
ֆ 10 սարիս է



ՆԱԺԻՐ ԱԶԳԱՅԻՆ. Ք' ՂՈՒԲԱՍԱՆ ԵՒ ԳՐԱՎՈՆ

ԿԸ ՀՐԱՍԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵԿՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

«Շաբաթ» եւ դրամ
որին խմբագրութեան
համարին

Редакция на вѣстникъ
«Шабжуѣ»
Варна

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար
մեֆ 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար
մեֆ 8 ՍԱՆԹԻՄ

Գրութեանք եւ լե
սրութիւն

ՇԱԲԱԹԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆՈՐԴԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԵԿՆԵՐ ԿԱՐԸ

ՃԵՍԱՐԻՑ ՎՏԱՆԳԸ ԵՐԵՒԱՎԱՅԱԿԱՆԻ ՏԵՂ

Մեր մերկացումները՝ մի քա-
նի ընկերներին, որոնք Ֆերքու-
պէս բոլորովին համաձայն են մեզ
հետ ու գիտակ մեր կուսակցու-
թեան ներքին ցանկերին պատ-
ճառ են տուել կասկածներ յայտ-
նելու թէ այդ ձեւի պայքարը
կարող է փաստաբար լինել թէ
կազմակերպութեան և թէ յեղա-
փոխական գործին, որովհետեւ
իբր թէ, հակառակորդները,
թշնամիները կը շահագործեն,
ժողովուրդը կը հիասթափվի և
Դաշնակցութիւնը կը զրկվի իր
ունեցած համայնքից. և այլ սրանց
նման առարկութիւններ:

Այդ առարկողները նմա-
նում են այն գաղտնի հիւանդու-
թիւններով վարակված մարդոց,
որոնք հիւանդութիւնով բռնվե-
լու առաջին վարկեանում. փո-
խանակ հիւանդութիւնը մէջտեղ
դնելու, ինչ որ անտեղի վախե-
րից գրգռված թագցնում են թէ
շրջապատողներին և թէ բժշկի-
ներին, միշտ մերձաւորներին
համոզելով որ իրենց հիւանդու-
թիւնը չնչին բան է ու կարող է
անցնիլ ընտանեկան միջոցներով.
Սկսում են ընտանեկան միջոց-
ները բժշկական հոշակ ունե-
ցող տէրտէրներ, պառաւ կնիկ-
ներ գառնում են հիւանդի մշտա-
կան այցելուները, միշտ իրենց
միջոցները զովաբանելով, հի-
ւանդին շրջապատողներին հան-
գատացնելով՝ բժշկներին դիմե-
լու փաստակարարութիւններ մատնա-
նչելով ու այնքան շահագործում
են մինչեւ որ հիւանդը այլեւս
ամբողջովին ընկնելով հիւանդու-
թեան ճանկերի մէջ, մօտ պգա-
լով իր կորուստը ամեն մի անտե-
ղի վախ մէկ կողմ թողնելով դի-
մում է իրական բժշկին. իր հի-
ւանդութեան ամբողջ մերկու-
թեամբը: Այն քարացած, սարս-
աւրով լսում է բժշկի պազ, սարս-
աւանդ որոշումը. — ձեր գործը
վերջացած է, բաւ չէ որ գուր

պէտք է մեռնէք. այլ պէտք է
մեռնեն և ձեր շրջապատողները,
որովհետեւ ձեր հիւանդութիւնը
թագցնելով, թէ ձեզ էք կորստի
մատնել և թէ ձեր մերձաւորնե-
րին՝ վարակելով և նրանց, Դուք
ձեզ յանձնել էք պառաւ կնիկնե-
րին և տէրտէրներին, որոնց
շահը պահանջում էք ձեր հիւան-
դութիւնը չնչին չկատել, ձեզ
շահագործելու համար: Եւ յուհե-
տեւ բժշկական ոչ միջոց ձեզ օգ-
նել չէ կարող ձեր գործը
վերջացած է:

Ֆիզիքական հիւանդութիւն-
ներին յար և նման են բարոյա-
կան հիւանդութիւնները. երբ
նրանք յայտնի են իրենց ամ-
բողջութեամբ ընտանեկան մի-
ջոցները ոչ միայն անհետեւանք
կը մնան այլեւ կորստաբեր ըն-
թացք կը տան:

Նրանց անհրաժեշտ է մէջտեղ
դնել, որովհետեւ բուժիչ ար-
մատական միջոցը հասարակական
կարծիքն է և նրա սոջեւ պա-
տասխանատուութեան զգացումի
չեզոքումը: Եւ այդ անհրաժեշտ է
մանաւանդ յեղափոխական կազ-
մակերպութիւններին համար, ո-
րոնք խողում են ամբողջ մի-
ընկերութեան, ժողովրդի ճակա-
տագրի հետ: Եթէ մենք պար-
տաւոր էինք մեր ցեղի պակասու-
թիւնները մատնանչել, պախա-
րակել, որովհետեւ նրանք վտան-
գաւոր էին և են ազգային գա-
տի, իրական յեղափոխական գոր-
ծի համար. նոյն չափով և պար-
տաւոր ենք մեր կուսակցութեան
պակասութիւնները հարւածել.
Եթէ վերը յիշած ընկերների ա-
ռարկութիւններով ղեկավար-
վենք. պէտք չէր և մեր ցեղի
պակասութիւնները դատափետել:

Մենք մեր նախորդ յօդուած-
ներով փաստեցինք որ Դաշնակ-
ցութեան ախտաւոր սխտէմը բու-
ժելու համար ներքին ճիգեր շատ
են թափվել և ապարդիւն են
մնացել, որովհետեւ սխտէմի
պաշտպանները գիտակցաբար և
անգիտակցաբար, վարժված ախ-
տաւոր միջոցորտին ամեն ճիգ

թափել են սխտէմը յարատեւել
տալ, գրուտել, միշտ վերը յի-
շտը կարծեցեալ վտանգները
մէջտեղ բերելով, միամիտ ըն-
կերներին ապագայ կործանման
վտանգով սարսփեցնելով:

Մենք նախորդ յօդուածներով
ցոյց տուինք նաև որ դեռ տարի-
ներ առաջ Դաշնակցական ընկեր-
ներին մէջ եղել են մարդիկ, ո-
րոնք համոզված են եղել թէ բա-
ցարձակ հրապարակային կռիւ
պէտք է մղել տիրող սխտէմի
դէմ, ու անշուշտ էտ են ընկրկել
վերը յիշած հնարովի և երե-
ւակայական վտանգների ուրա-
կանից սարսփած, և ներքին
պայքարի օգտակարութեան սին
յոյսի վրա կրթնելով:

Սակայն իրականութիւնը այսօր
հակառակն է ցոյց տալիս. նոյն
ախտաւոր սխտէմը թագաւորում
է սանձարձակօրէն. այտաբուստ
փայլուն կազմակերպութիւնը
կարծված ուժի մի 100րդ. չունի.
յեղափոխական պարզիտների
քանակութիւնը այսինչ և այնինչ
անւսն տակ աւելի մեծ է:

Ու այսպիսի պարագանի բուժ-
լուռ հանդիսատես մնալը թագ-
ցնելը աւելի և իրաւապէս վտան-
գաւոր է, քան հրապարակ գնելը,
որովհետեւ այլանդակօրէն թա-
գաւորող սխտէմի յարատեւումը
մեծ վտանգների դուռ է բանում,
որի նշանները երեւում են ու
գրանց մասին մենք կը խոսենք
յաջորդ համարով:

ՎԱՐԴՈ

ՀԱՅՐ ԵՒ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

(—) (—)

(Շար. Ասիւ. քիւրկ)

Երկ կ. նախագահը, ոստիկանական
տան վերահսկիչին հարցապնդում ա-
նելու ժամանակ, իմ ոստիկանատնից
ուղարկած երկու մասնաւոր նամակ-
ներ ի առթիւ, ի միջի այլոց հարցրեց
թէ արդեօք մեղադրեալին յայտնել
էիս, որ իր նամակները գատախազի
կողմից բռնւած էին, ձեռագիրը կըս-

պէտքիդ ենթարկելու համար Ոչ ոք
այդ մասին նախագահին չը պատաս-
խանեց, Այո, պ. պ. դատաւորներ,
ես այդ մասին իմացայ եւ այն էլ պա-
տահամար միայն, 8 ամսից յետոյ,
մինչդեռ մինչ այդ ժամանակ ես հա-
ւատացած էի թէ իմ նամակները ու-
ղարկւած են: Եւ այդ նամակները,
որոնցով ես պարզապէս ծնողներին
լուր էի տուել ձերբակալութեանս մա-
սին, բռնւած էին դատախազի այդ
օրէնքները ճշմարտութեամբ գործադ-
րութեան համար՝ հսկողի գիտակցու-
թեամբ: Փոքրիկ շայն շատ բնորոշ
փաստ է այնպէս չէ. . . Ահա եւ
մի ուրիշ աւելի բնորոշ հանգամանք:
Այստեղ մեղադրեալները նստարանի
վրայ միայն ես եմ նստած. ոչ դա-
տախազը իր ճառի մէջ եւ ոչ էլ ոս-
տիկանական վկաները ոչ մի ոտք
չստացին, որ այս միեւնոյն գործով
40 հոգի էին ձերբակալւած: Դրանց
մէջ կային ե՛ւ բանւորներ, ե՛ւ ուս-
նողներ, եւ թէ այլ ինտելիգենտ
մարդիկ, որոնք բանտում նստեցին
որը 6, որը 8 ամիս եւ վերջը ազատ
արձակեցին մեղադրանքի ոչ մի փաստ
չը գտնելու համար: Մինչեւ իսկ
ժանդարմական քննութիւնը: Որին
շատ քիչ բան է հարկաւոր մարդոց
մեղադրելու համար. չը կարողացաւ
նրանց դատի ենթարկել: Հարց է
ծագում, թէ ինչո՞ւ համար այդ մար-
դիկը բանտ նստեցին, ինչո՞ւ համար
են ի գոր բանտերում կորչում 17, 18
երիտասարդական տարիները, եւ այդ
բոլորը կատարում էր եւ շարունակ-
ւում է կատարել գատախազի անպի-
ցութեամբ եւ այն դատաստանական
պլատի հսկողութեան ու թեւերի
տակ, որը այսօր զարմանում է, թէ
ինչո՞ւ մենք յեղափոխականներս պէտք
եղած յարգանքը չենք տածում դէպի
իրեն:

Ի նկատի ունեցէք, պարոններ, որ
սա մի առանձնակի դէպք չէ. երկ կ
դուք քննում էիք Հեշիւնսկու եւ այ-
լոց գործը, մեղադրողները 4 հոգի է-
ին, իսկ ձեռքակալւած էին աւելի
քան 40 հոգի, կամ թէ այսօր դուք
պիտի լուր կըսեք ինչպիսի գործը, որի
պատճառով նոյնպէս մի քանի տասն-
եակ մարդիկ էին ձերբակալւած: Չէ
որ մեզանում ձերբակալւում են բան-
ւոր զօտակարգի ամենալաւ եւ առա-
ջաւոր տարրերը. ինտելիգենտայի ա-
մենակենսունակ խաւերը, եւ այդ
բոլորը անում է յանուն պատժական
որէնքի այսինչ կամ այնինչ յօդուածի:
Ինչպէս կարող էք, պ. պ. դատա-
ւորներ ինձնից յարգանք պահանջել
դէպի այն օրէնքը եւ նրա այն ներ-

կայացուցիչները, ինչպիսին են մեր դատախազները, որոնք առաջինն են, որ պէտք եղած յարգանքը չեն տա-ծում դէպի դատարանը: Ուշադրու-թեամբ կարդացէք մեզադրական թղթի առաջին տողերը, որտեղ սու-ւած է որ գաղտնի ոստիկանութեան հաւաքած անդեկուծիւններից եւ ոս-տիկանական ազնիւների ցուցմունք-ներից երեւում է, որ ես յարաբերու-թիւն եմ ունեցել արտասահմանեան «Իսկրա»ի կազմակերպութեան հետ եւ կուսակցութեան տեղական կոմիտէի անդամն եղել: Այս մերկ ամբաստա-նութիւնը դրոււմ է դատարանի ա-ռաջ առանց որ եւ է փաստացի ապա-ցոյցների. երեւի ենթադրոււմ է, որ դատարանը պարտաւոր է հաւատալ ոստիկանական ազնիւների անսխալա-կանութեանը: Միթէ՞ կարելի է որ ինքը իրեն յարգող դատարանը թոյլ տայ այդ կարգի անկարգութեան մը-շուշով պատուած ամբաստանութիւն-ները: Եւ միթէ՞ դատարանը յարգող դատախազը իրեն թոյլ կը տա՞յ դա-տարանի առաջ շարունակ պնդել լրր-տեսների ցուցմունքները: Ոչ պ. պ. դատաւորներ, ո՛չ դատարանն է ի-րեն յարգում եւ ոչ էլ դատախազն է նրան յարգում: Մեր դատարանները լաւ գիտեն միայն փակած դռների ետեւ խեղդել ներկայ քաղաքական կարգերի, թշնամիների ձայնը: Ես դեռ չեմ կանգ առնում այն դրակո-նական պատժների վրայ, որոնք տրը-ւում են մեր օրէնքներով, այսպէս կոչւած, քաղաքական յանցաւորնե-րին. տաժանակիր աշխատանք, աք-սոր, կախաղան, —ահա մեր դատա-րանների պատասխանը ազատութեան համար մարտնչողներին... Մեր օ-րէնքների վրայ, պ. պ. դատաւորներ, կարելի է ծիծաղել, նրա դէմ կարելի է եւ պէտք է կուել, բայց յարգել նրանց երբէք չէ կարող քաղաքակրթ-ւած մարդը:

(Շարունակելի) «ՎՊԵՐԵՕԴ»
(Ռուս ազատ թերթ)

ՆԱՄԱԿ ԵՐԿՐԷՆ

—(—)

Այն օրը որ Համիտը Օսմանեան գահը բարձրացու, Օսմանեան Հայաստանի ճակատագիրը

Ա. ԱՄՖՆՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՕՐԻԱ ՊԱՎԼՈՎՆԱ

—(—)

(Տօնախմբութիւն)

—(—)

(Գրագիտի յիշողութիւններից: Ամրան արկածներ քաւսկան տարօրինակ հասարակութեան մէջ)

—(—)

(Թարգմ. ռուսերէնից)

47

Թ.

(Շար. Ասխորդ քիտի)

—Եւ մենք Աֆանասիի հետ գնացինք Պուրնիկովօ գիւղը եւ նստեցինք մի ինչ որ հերբաւէր Օլգայի, գինուրի կնոջ կալում, եւ ոչ թէ մի հատ նետեցինք այլ անթիւ: Եկան եւ գիւղի աղջիկները, սկսեցին երգել, այդ պատճառով աւելի շատ

բոլորովին փոխվեցաւ. իրեն նախորդներուն պակաս թողուցածը ամբողջութեամբ լրացուց, Համիտը, մահ, արիւն, աւեր, սոսկում, ոճիր յղանալու ու գործադրելու իր տեսակին մէջ ամենաբարձր հնարագէտն է, որուն հպակի տիտղոս մը տալու համար ապագայ պատմագիրները ի զուր պիտի չարչրկեն ինքզինքնին. նա իրեն ուղղակի կամ անուղղակի պաշտպանութեան տակ կառնէ այն բոլոր փաշաները, պէյլերը, ամիրաները, տէրէպէիները, աշխրէթի գլուխները ու աղաները որոնք լաւ դաւեր սարքել, լաւ լրտեսել, լաւ կողոպտել, ու լաւ սպանել գիտեն, այս տեսակ մարդիկ հարկաւոր են սուլթանին...

Հա ժամանակ մը հայ հարուստ աղաներն ալ, սուլթանի մասնաւոր հոգածութիւնը ու առանձնաշնորհումները կը վայելէին. իսկ այժմ, տեսարանը փոխուած է. եւ սուլթանը իր-ուրեք ունի ըսելու թէ «Իկարգի ես գիտեմ իմ իմ բոլոր գործերս. անպիտան կեանքներն նախ ծառին արմատները կտրեմ յետոյ բունը ինքնին կերկարի իմ կացիւնիս տակ»: ու այսօր այդ հայ աղաներու տգէտ գլուխներուն է որ կուտայ անբուժելի հարուածը, հոս արձանագրենք, 1904 տարւոյ Գիլի մէջ պատահած խնդիր մը. Գիլի գասապայէն կառավարութիւնը զօրախուժով մը կուգայ կը պաշարէ Խուրա գիւղի մէջ գտնուած Խօջմաթիւններու տունը 3 եղբայրները ձերբակալելով կը տարուին գասապան եւ քանի մը օր վերջ կարին կը խրկուին:

Կարնոյ մէջ քանի մը ամիսներ բանտը կը մնան եւ ինչ պատճառաւ գիտէք իբր յեղափոխա-

կան... Փառք Աստուծոյ հայ հարուստներէն ալ յեղափոխական կեանք եղեր. վերջը այդ տարածայնութիւնները կը վերջանան ու այն զրոյցը կը պատի հըրապարակ թէ արտասահմանէն թերթեր եւ գրութիւններ խրկուած են իրենց հասցէին, իրենց հայրենակիցներուն ու է մէջը ուղած է Ֆրասել իրենց. բան մը որ բոլորովին անհիմն եւ բացարձակ ստուծիւն մըն է. կառավարութիւնը լաւ գիտէ որ Խօջմաթիւնը ոչ յեղափոխական է, ոչ կրնայ ըլլալ, եւ ոչ ալ արտասահմանէն ու է գրութիւն խրկուած է իրենց հասցէին, այլ որովհետեւ հասարակ ժողովուրդը բոլորովին տնանկ եւ խեղճ վիճակ մը ունի. ճարպոտ պատահ մը պէտք է, որ անկուշտ պաշտօնեաներու սրուած ախորժակներուն գոհացում տայ. վերջ ի վերջոյ Խօջմաթիւններ իրենք ալ կը համոզուին թէ գուրսէն ու է գրութիւն մը կամ թերթ մը խրկուած չէ իրենց հասցէին, հակառակ իրենց նախկին կարծիքներուն այս կամ այն անհատին նկատմամբ, պաշտօնական դաւադրութիւն մը սարքուած է իրենց դէմ, ուսկից զուրս պրծելու համար մէկ ճար կայ ապագա արագ քակել, մասնաւոր խնամքով շարուած այն գեղին ոսկիները, որոնք գիւղացիին զաւակներուն եւ ընտանեաց ճակատին արիւն քրտանց արդիւնքներ ու շնորհիւ այդ ոսկիներուն կրցան հօգիւ հաղողատիլ, Բրգի ամենամեծ հողատէրն էր. միեւնոյն ատեն առեւտրական փոխցածի, գոռոզ ու տգէտ, բայց ճայ պիկ խաբեբայ:

Շատեր պարտաւոր հակով դըրամ կառնեն իրենցմէ 1 ոսկին տարվան մը մէջ 3 անգամ կը ծնի, ու եթէ մէկուն առածը 5

չրի մէջ. բայց իմ հարածիս մըտքովը իսկ չանցաւ որ կատակում եմ հարած վախկոտի հետ որին փոքրիկ շուրն իսկ ծով կարող է երեւալ եւ բացի այդ փչացում եմ նրա միակ զգեստը որով նա կարողանում տնից դուրս գալ: Աֆանասիչը չորս թաթով դուրս սողայ առակից, թաց, աւաղոտ, տղմոտ եւ դողալով... ու շատ ծիծաղելի, ես ծիծաղում եմ ամբողջ կողորդով. անտառի բուրնիան եւ կողքերս բռնելով, սուսելով:

—Այ դու յիմար, թաց ագռաւ, նա քայլում եւ ինչ որ քթի տակից փնթփնթում է:

Ես այդ վիրաւորական նախադասութիւնը մի քանի անգամ կրկնեցի. ու յանկարծ նա ցատկելով, դեղնած, դողալով շուրջս թողնողով ստուծ է —Այո, ագռաւ եմ, թաց, յիմար, յաւակնոտութիւն չուրեմ. իսկ դուք ինչ էք. թոյլ աւէք խոնարհութեամբ հարցնել: Ես չարեցի. ու ասում եմ. Խենթեցա՞ր ինչ է. կատարե-


կամ տասը ոսկի է, վայ այն անհատին գլխուն, 5ը կըլլայ 10, 20, 40 եւ պարտատէրը կըստիպուի ունեցածը շունեցածը անոր յանձնել ու հեռանալ գիւղէն, որոնց նմանները շատ ու շատ են, իւրաքանչիւր հանդիպողի, գիւղին մէջ գտնուած ավերակ տնակը իւր ցաւալի պատմութիւնը կընէ:

Հապա Խօջմաթիւններու որդիները, այդ գիշերաշրթիկները ատոնց ըրած անամօթութիւնները լրագրական համեստ էջերը չեն ներեր եւ ես գրելու համար ամօթ կըզգամ:

եւ դեռ որչափ գրելիքներ կան, իրենց կարգին կը խօստանամ գրել:

Մնամ խորին յարգանք
Սգաւոր

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ



ՀՆԱՐ Է Թ Է ՈՉ

Երկար ատեն անցած չէ դեռ այն պատմականօրէն յիշատակելի օրէն իվեր, երբ նոխագահ Ռուզիկէթ. — կարծես քաղաքավարի ապտակ մը տուած ըլլալու համար Եւրոպայի Մեծ պետութիւններուն, որոնք միշտ արեւզերական բարեխնամ եւ հոգատար հայր նկատուելու յաւակնութիւններ ունին, — անգամ մ'ալ ապացուցանելու համար, թէ իր երկիրը լոկ Պիլի Նէստի եւ տօյարներու աշխարհ մը չէ՛ զուրկ ամեն տեսակ մարդասիրական զգացումներէ ծանր ու լուրջ մտածումներէ վերջ, առանց չոր ու անպէտ ֆոնդերով ժամանակ վատնելու, ծրագրեց երկու կուռղ պետութիւններուն դրկուելիք ծանուցա գիր մը, հրաւիրելով զանոնք բանակցութիւններ բանալ խաղաղութիւն կնքելու եւ ներկայ հակամարդկային արիւնհեղութեան վախճան մը սպառ...

Մեր նպատակէն դուրս է ատոր յառաջ բերած տպաւորութիւնները ցր...

Շարունակում է ցատկել եւ ասել. —Ձէ, բաւ է. ինչ որ կոտորովեցիք ես չեմ թոյլ տայ. չեմ հանդուրժի. դուք ինչ թուղուն է՞ք, արծիւ: Բարեհաճեցէք պատասխանել, թրջված ագռաւն է հարցնում ձեզ: Ես կարծում եմ որ դուք ձեր մասին արժեք պակաս կարծիք չունէք:

—Քեզ մօտ ամեն մէկը արծիւ կերեւայ, պատասխանում եմ ես, իսկ նա իսկոյն առարկում է.

—Արծիւ այո, թուղունների թագաւորը վեհ իր սլացքում. բայց այնչ կասեմ ձեզ, պարոն արծիւ, դուք շատ հրաշալի էք բայց եւ այնպէս ձեր արժուոյնին ձեզ վրա նայել իսկ չէ ուզում, առէք եւ ճաշակեցէք:

—Ինչ էք ասում, ինչ արժուոյնի՞ս —Այո, թքել է ուզում ձեզ վրա գեղեցիկ արժուոյնին. բայց ես թէ եւ թրջված ագռաւ եմ, բայց եւ այնպէս ձեր արժուոյնին այս անտառը ինձ մօտ տեսակցութեան էր քաղիս:

մի առ մի վերակրկնել հոս, քանի որ ատոնք ժամանակին յայտորարար հազորդութեան, ինչ որ, սակայն, կուզենք ի նկատի առնել, սա ալ այն կէտն է, որ հակառակ մամուլին լաւատես յայտարարութիւններուն, մինչեւ ամոռն սկիզբները որոշ բան մը յայտնի չէր տակաւին և հետագայք իր հասարակութիւնը վարանտ երկուութեան մը մէջտեղ կը զըտնուէր:

Հիմա, այլեւս իրողութիւն մ'է որ երկու կառավարութեան իրազօրները ճանապարհ ինկած են դէպի Ուոշինկթըն, — Պատոն Գամբա և Պ Դաքտերա Միքսայի կողմէն. պ. պ. Վիթթէ և Ռոզէն ցարէն:

Վերջոյն իրազօրներուն նկատմամբ բաւական տարօրինակ դէպքեր յառաջացան. Նախ և առաջ ցարը իբրեւ իրեն իրազօր ընտրած էր Մուրաւլիէվը, որ յատկապէս կանչուեցաւ Յարսիօէ Սէլօ քօնթինէնդէն, բայց սա, իր տկարութիւնը պատրուակ բերելով՝ հրաժարուեցաւ այդ երկար ճամբորդութենէն և ծանր պատասխանատու գերէն. նիքօլա Բ. ընդունեց հրաժարականը և անոր փոխարինելու ռուզն Նելիտով (Բարիդի ռուս գետնաձիգ) Տկարութեան մի եւնոյն պատճառաբանութիւնը բերուեցաւ յիշեալէն և դժբախտ ցարը մնաց շուտաւ. Ո՞վ զրկել: Մեծ դուքսերը նպատակի նման կը հաւատուին Բլէվէյի և Սէրգէյ ռուսականով, իսկ ասպարէզ ինկոզներն ալ ցարին հաճելի անձնաւորութիւններ չէին: Վերջապէս ընտրեց երկու չարեաց փոքրագոյնը եւ ազատամիտ Վիթթէն կանչուեցաւ Յարսիօէ Սէլօ, Օգոստոսփառ Յարի ներկայութեան. թերեւս գրութիւններու գտնարձաքի տեղ ընդունուի, երբ յայտնենք թէ՛ ճիշդ այդ օրն ալ Վիթթէ մնացած է եղբոր անկողինը, սաստիկ կոկորդացաւի մը պատճառաւ. հետեւաբար «ցտակցաբար եւ խոնարհաբար» կը մերժէ հրաւերը այդ օր... Եստ երկարաբանել չենք ուզեր այդ մասին. Բաւական է ըսել որ ցարը վերջ ի վերջոյ յայտնած է համոզել Վիթթէն եւ ճամբու դնել... Հարց մը, որ կը ծագի ինքնին, սա է, թէ՛ ինչու այդ մեծատիտոս անձնաւորութիւնները մերժեցին ցարին առաջարկը եւ հրաժարուեցան

մեծ եւ բարերար դեր մը ստանձնելէ... Սոյն հարցին պատասխանը գրտնելու համար պէտք է քիչ մը խորը մտնել եւ այնպէս քննել խորքը:

Ճիշդ այն պահուն, երբ նախագահ Ռուզվիլթի առաջարկը ընդունելու կամ մերժելու որոշումով էր զբաղուած Յարսիօէ Սէլօ ի Բարսկը. Մանչեսթրիայի ռուս բանակին հրամանատարութիւնը կը հասցնէր հզօր պատգամ մը. — Ձերդ Վեհափառութեան բանակը երբէք նման ետանդուն սգեւորուած եւ գործելու եւ յաղթանակելու պատրաստակամութիւն ցոյց տուող վիճակի մը մէջ գտնուած չէր: Ուստի եւ, այսպիսի րուպէի մը, երբ հաւանական ըստխախտ յաղթութեան մը նախօրեակին մէջ կը գտնուինք, անխոհեմութիւն կարելի է համարել խաղաղութեան ստիպողականութեան մասին խօսիլը. եւ այն, եւ այն... «

Այս տողերը դուրս հանեցին այլալաճ խմբակր անելին մէջէն: «Ձախ ջախի՛ յաղթութեան նախօրեակին մէջ» կը գտնուէր Ռուսաստանը... Եւ ո՞վ էր գրողը, Լինքոլնի բնկերակցութեամբ. անոր պաշտօնակից սեծահամբաւ Գոթթօրթ կ'իւր. — այն փութօրթիկը, որ Մուքսի «Վախճախի» պարտութիւնէն քանի մը շաբաթ առաջ կը պոռար թղթակցի մը. — «Ռուսաստանը յաղթուիլ չը գիտէ, այլ յաղթելու գիտէ միայն...»

Մրացիները բոլորովին փոխուեցան. Կէտեր, որոնք թերեւս քիչ առաջ որոշուած էին ընդունիլ իբրեւ պայման խաղաղութեան փութագրման, ետ առնուեցան եւ զիջումները յանգեցան այնպիսի չնչին աստիճանի մը, որ կարելի էր ըսել թէ՛ հաւանութեան առաջ լէզօն արդէն արձակուած էր...

«Ձերս կամ հինգ ամիս եւս, կը հայցէր Լինքոլնի «պզտիկ հօրմէն» մի՛ զլանաք այդ աննշան ժամանակամիջոցը ձեր հաւատարիմ զաւկներուն որ մեծ ու փայլուն յաղթանակներ կը խոստանայ...» ի փոստ ցարին եւ ի պանծանս հայրենիքի!!!

Ի ջախկան խմբակր պէտք չունէր այսպիսի «յուսարբ» պատգամներու իր ոճրագործ գործունէութիւնը շարունակելու համար. այլ միայն զօրաւոր փաստ մը եղաւ տատանող ցարը համոզել իր բանակին «անպարտելիութեան» մասին. Եւ անա այս

ներքին խաղերուն լաւատեղեակ ըլլալին էր որ առիթ տուաւ ընտրուած շարք մը իրազօրներու հրաժարման որոնք լաւագոյն սեպեցին չէզոք մնալ քան անկարելիութիւններու համար ժամանակ վատելու եւ ապա եւս խայտառակ ըլլալ... Որովհետեւ, իրապէս, Ռուսաստանի խաղաղութեան պայմաններու առաջարկը տղայական ըլլալէ զատ (Թայմըզի խօսքը գործածելով) անհնար էր ու եւ կ'ելլար:

Պ. Վիթթէ, սակայն, որ մեծ համբաւ կը վայելէ երոպական մամուլին մէջ իբրեւ խաղաղութեան է՛ն ետանդուն ջատագով մը, այսօր յանձն առած է ի գրուել հանել այդ գործը:

Պիտի յաջողութիւն արդեօք: Անա երկրորդ կնճոռոտ հարց մը: Բեթերսպուրկը ձգիլէն առաջ, այդ միեւնոյն խաղաղութիւն Վիթթէն աւմերիկեան լրագր. գործակալութեան մը ներկայացուցչին կը յայտարարէր թէ՛ ինք ալ իր պաշտօնակից բարեկամին՝ կոմս Լամտօրֆի համակարծիք է, թէ ցարը միայն կարող է որոշվծն մը տալ եւ թէ իր անձնական գաղափարները չը նայելով մեծապէս պատերազմի վերջացման հակում ունենայուն, միայն երկրորդական նշանակութիւն ունին եւ թէ ինք ամենայն ճշգրտութեամբ պիտի հետեւի ցարի պայմաններուն:

«Պէտք է դարձիլ հաւատարէ թէ՛ Ռուսաստան կողմէ ամեն գնով խաղաղութիւն կայացնել...» Աւելցուցած է յարգելի մինիստրը հարցատուին եւ սա շատ բաներ կը լուսաբանէ:

Իսկ թէ ինչ են «ցարին պայմանները», որոնցմով բեռնաորուած Ուոշինկթըն կը դիմէ Վիթթէ իր թշնամի կառավարութեան ներկայացուցչին: Եստ ճշտապէս առ ճակատ գալուստ ունին եւ վիճելու համար, տա կարին խիստ մոթ կերպով են լոյս բերուած:

Կէտ մը, սակայն կայ որ ծանօթ է մեզ և որ բաւական հետաքրքիր ու խորհրդաւոր բաներ կը պարտուակէ իր մէջ ճարը կողմէ որ խաղաղութիւնը կայացուի մ ու եր հիմա մ վրայ եւ ատոր համար լաւագոյն միջոց կը գտնէ՛ խաղաղութեան կնքումէն անմիջապէս յետոյ Ռուսո-

ձարօնական դաշնագրութիւն մը: Այդ պարագային, ձեռք քաշելով հանդերձ Բորէյայէն եւ Բորգ Արթուրէն կը գիջանի նաեւ Ս. խային կղզին ու, — զարմանալի՛ բան — նոյն իսկ շափաւոր պատերազմական ծախսերու հատուցում մ'ալ... Զարմանալի՛ ըսինք, ո՛չ, ուսուկան գործիչները ատոր համար եւս հնարած են ելք մը: Զիջանելով այդ բողոքին եւ նամանաւանդ հատուցումին ուրիշ բան մը բրած չը պիտի ըլլայ ռուս կառավարութիւնը. այլ եթէ իր ապագայ դաշնակից բարեկամը նիւթապէս եւ բարոյապէս զօրացնել քանի որ անոր ոյժն ու պատիւը այլեւս իրը (Ռուսաստանինը) կարելի է համարել... Եւ տարօրինակ է ըսել, որ Բարիդեան շարք մը օրաթերթեր, յայտարարելով այս բողոքը, յառաջ կը բերեն նաեւ դերկոմս Հաւաչի, Մուքսի և Սէնէմարտի նման մեծահոշակ ճարտ տէրուական անձնաւորութիւններու համակարծիք դիտողութիւնները այդ գաղափարին ներկատմամբ... կը հոշակեն մինչեւ անգամ թէ՛ «երկրորդին վրայ երեւցող Անգլիան իսկ անկարող է վախորենի գիրենք...»

Իրաւ է թէ ճարտական կառավարութեան մեծագոյն բաղձանքը եղած է միշտ մտերմօրէն ապրիլ Ռուսաստանի հետ, եւ այս նպատակով ալ կոչեր ձգած է ռուս բանակին մէջ, զեռ նալուր կուռէն յետոյ, հրաւիրելով զանոնք զինսթափ ըլլալ եւ մարտել կոռել, որովհետեւ իրենք չեն ուզեր անձեղ մարդիկ ջարդել, եւ այն, բայց, ինչու չեն յայտնեց Բարիդեան օրաթերթերը՝ ի է ճարտական ժողովուրդը կողմէ բարեկամութիւն ռուս ժողովրդին պատկանող կառավարութեան հետ, եւ ո՛չ թէ՛ նենգ, ոճրագործ, մարդասպան, յետադէմ ու ապականուած ցար/զմի հետ... Անտ՛ հոկայ տարբերութիւնը երկու յայտարարութիւններուն:

Քանի միահեծան ցարիքի իխանութիւնը կը տիրապետէ Ռուսաստանին վրայ, անհնար է որ Անգլիոյ դաշնակից ձարօնը հասկերպի իր ճակատագիրը կապել զիսկնացող կառավարութեան մը եւ, հետեւաբար ասկէ կը հետեւի թէ՛ խաղաղութիւնն ալ կայանալիք չունի... (Շարունակելի)

Ամբողջ սիրով ինձ ձօտ էր գտնվում ձեր արձուակին, այո իսկ զուգար ռոն արծիւ կարող էք ապուրի ամանի կողքերը լիզել միայն:

— Ինչ ես ստում յիմար մարդ, ինչ տեսակցութիւն, ինչ արձուակի ոչինչ չեմ հակառուում:

Թէեւ ես ստում էի. նրա առաջին ստոր ակնարկի վրա սիրտս ստոեց. իսկ նա մօտենալով քթիս Ֆըշացնում է:

— Այ հէնց նա, որ ձեզ, հէնց այդ գեղեցիկ քթի համար քաջըռ մ է եւ քեզ նման բարձրալաց արծիւին ճանաչել չէ ուզում, իմ Յէնիզկայիս, որին դուք նկարում էք, հարազատ մայրն է. Վիկտորիան, իմ սիրուիս է:

Այդ ասելով նա ինձնից հեռու թըռաւ, վախնալով որ ես կըսկսիմ ծեծել:

Իսկ իմ աչքերս միջնեցին, ոտքերս թուլացան, ձեռքերս ծանրացան:

— Ստում ես, ստում ես... գոռում եմ ես:

Եւ անա այդ ժամանակ նա ինձ պատմեց ամենը. երեւում էր որ այդ գաղտնիքը նրան շատ էր տանջել. այնպէս որ մի անգամից ուզեց թեթեւալ այդ ծանրութիւնից, եւ այդպէս յաղթականօրէն իմ ձաղրանքի հանդէպ:

— Փաստեր էք ուզում, փաստեր, մանրամասնութիւններ համեցէք պարծի: Եւ թափում է դուրս ամեն ինչ. ես այժմ մանրամասնութիւններ չեմ պատմի ինչ որ ասեց ինձ Աֆանասիչը: Գլխաւորը այն է որ ինձ նույն էլ ոչ մի կասկած չը մնաց. այսինքն որ Գը տարի առաջ Վիկտորիան իրօք նրա սիրուիին է եղել եւ Աֆանասիչի կողմից առանց ու եւ է խաբէական միջոցներով:

Աֆանասիչը իր մերկացումով ինձ շարեցրեց. ոչնչացրեց. ես քարացածի պէս կանգնած էի նրա առջեւը. Ամեն ինչ լուում եմ, հաւատում ինչ որ սարսափելի է ինձ համար, բայց ոչ Աֆանասիչի եւ ոչ Վիկտորիայի վրա եմ բարկանում. միայն ծանր վիշտն է տանջում ինձ, կարծես թէ


ամենամօտիկ մարդկանցից մինք մեռած լինի եւ ես նրան իմ ձեռքովս թաղում եմ:

Իսկ Աֆանասիչն էլ ամեն բան դուրս տարուց յետոյ, երբ խելք զը լուրը եկաւ, այն ժամանակ զգաց միայն թէ ինչ փորձանք ստեղծեց. ու սկսեց հառաչել, հեծեծալ Վերջը մենք շատ երկար խօսեցինք, բայց ինձ այժմ պատկերացնել անկարելի է. Այժմ ես միայն կարծես մտաբերում եմ թէ որ ես բաւական ժամանակ ծառի տակ պարկեցի եւ ջնացայ. ուրեմն նեարդերս թոյրուղին ու ժասպառ էին եղել կարելի է որ այդպէս էլ չեղաւ, այժմ միայն երեւակայում եմ: Միայն յիշում եմ որ արեւմտքի միջոցին, ես մայրիին յենված եմ մէջքովս, աչքերս արիւնոտ իսկ Աֆանասիչը ծնկաչոք ձեռքերս համարել ուզելով ստում է:

— Այնքան Այնքան/չ բարեկամ, իսէր Աստուծո, ներեցէք, կատաղած շան. մոռացէք ինչ որ ասացի ձեզ. ամենը սոււ է. Աստուած տեղն ու տեղս մեռցնէ, այստեղ եթէ սուտ

չլի ասում: Բարկութիւնից ուզում էի ձեզ չարացնել. հարբած եւ բարկութիւնից Ամեն էլ ես հնարեցի. իմ յիմար երեւակայութեամբ. իսկ իրականութեան մէջ նմանութեան նշոյն անգամ չը կայ... ստեցի... — Է՛հ Աֆանասիչ, պատասխանեցի ես, այժմ ուշ է. ես քո սաստին հատաացի եւ էլ ինձ ես համոզել կարելի չէ: Տւածք գաղտնիքի համար մի վախենայ. նա ինձ հետ կը մեռնի. կարող ես հաւատալ. քո յաղթանակով եւ մրցակցութեամբ պարծեալը ինձ համար նախանձելի չէ եւ հիմա միայն ճամբարութիւնն եմ ուզում իմանալ. պատասխանիր ամբողջ ճշմարտութեամբ. որովհետեւ այդ ինձ համար շատ անհրաժեշտ է, եթէ ստես գլուխը կը ջարդեմ. Եւ սկսեցինք խօսել առանց ու եւ է գիմակի:

(Շարունակելի)



Ան արդէն անոնք որ օրէ օր «Նօ-
վօէ Վրէմիա»ի, «Ալօփօ»ի եւ նման
միակերպական տաճարը խնկարկող
ստորագրի սպասուորներուն մրոտած
թերթերը թղթատելու պատենու-
թիւնն ունին, բացայտօրէն պիտի
տեսնեն թէ այս դէպի Ուօլինկթըն
տոսաքելութիւնը լոկ ձեւակերպու-
թիւն մ'է, ցուցնելու համար աշ-
խարհին, կամ ա'լ աւելի, իր ժողո-
վըրդին, որ փոթորկիլ սկսած է ա-
րիւնի կոհակերտով, թէ ինք եւս,
Ռուսաստանն ա'լ պատրաստակամ է
խաղաղութիւն հաստատելու...

Նօվօէ Վրէմիայ ասկէ քանի մը
օրեր առաջ կը յայտարարէր թէ բա-
նակցութիւններ ընելը երբէ'ք խա-
ղաղութիւնը վերջացած ըսել չէ, քա-
նի որ միեւնոյն բանը պատահած է
ուրիշ պարագաներու տակ եւս՝ ա-
ռանց վճռական ելքի: Անարօշօն
Մօսկուայի մէջ էր եւ խաղաղութիւն
չը կնքեցինք, Ձինաստանի' մէջ պի-
տի կնքեցինք զայն... կը գոչէ քա-
ղաքացի Վ. Ս. Եր: Իսկ իր Մաշու-
րիայի թղթակիցը, որ օֆիսեր մ'է
միեւնոյն ատեն, դեռ կոտի առաջին
օրէն իրենց բանակին անբացատրելի
կորուցն ու եռանդը՝ հռչակելէ յետոյ,
այսօր ալ սա ծիծաղելի տողերը կը
դնէ: «Իմ նախագուշակումս, թէ
ճարտարացիք անկարող պիտի ըլլային
յարձակողական դիրք բռնել, իսկա-
պէս արդարացած է, նոյնքան մեր
բանակին ուժեղացման, այնքան եւս
թշնամիին ուժանտման շնորհիւ...»

«Պատերազմին սկզբնաւորութենէն
ի վեր, ռուս բանակը երբէք ա'յնքան
զօրեղ չէր եղած որքան հիմա՝ ճա-
բոնացիք նկատի ունեցած են այդ.
Կա՛մ թէ ինչու կը բաղձան խաղա-
ղութիւն...»

Այրած սրտին հէք մխիթարանք
«Նօվօէ Վրէմիայ»ի միակը չէ այդ
հաւատքին մէջ, Պաշտօնակիցներ շատ
ունի:

Ու այս բոլորէն վերջ, հակառակ
տեսնուած արտաքին լաւատեսութիւն
ներշնչող երեւոյթներուն, կարելի է
ըսել որ խաղաղութիւնը այսօր ալ
ա'յնքան տարակուսելի հարց մ'է որ-
քան էր երէկ, երբ տակաւին եւ ո'չ
մէկը ճանապարհ էր ինկած:

Իցի'ւ թէ անճիշտ ելլեր սոյն են-
թագրութիւնը, բայց, ոչ, ափ մը
Ռօմանովները աւելի թանկ կը հա-
մարեն իրենց սեփական գոյութիւնը
եւ բարեկեցութիւնը, քան հարիւր
միլիօն ժողովրդինը:

Մ. ՅԱՆԱԿ

ԹՈՒՐԿԻՆՆԵՐ ԿՈՎԿԱՍ ԽՈՒՎՈՒՄԸ

Եւրոպական յուլիս 12 ին
ժնէվէն հիւրօ Արմէնիայի
կը հեռագրեն հետեւեալը.

Մենք ի վիճակի ենք ամբողջ
Եւրոպայի աւջին մերկացնել
Պօլսոյ մէջ կազմուած ծրագիր մը
կովկասի մասին: Չեւք անցուց-
ուած գաղտնի թղթակցութիւն-
ները երեւան կը բերեն որ Սուլ-
թանը, գերման սպայակոյտի
կազմած ծրագրի մը համաձայն
կուզէ խուժել Կովկաս, օգտուե-
լով Ռուսիոյ ներկայ տագնապալի
վիճակէն: Թաթարներու գլխա-
ւորները գիտակից այս ծրագրին
կազմակերպեցին Կովկասահայոց
կոտորածները երկիրը մաքրելով

քրիստոնեայ տարրէն Թուրքիոյ
տիրապետութիւնը դիւրացնելու հա-
մար: Թուրք զօրքերը մէկ կողմ
թողլով կարսի ամրութիւնները
սահմանը պիտի անցնէին Բայա-
զէտի քովէն քաղաքով դէպի նա-
խիջեւան եւ Պաքո, սնկէ Դաւ-
ղստան միշտ գտնելով տեղական
մահմետական տարրը պատրաստ
ապստամբելու Ռուսիոյ դէմ:

Ի՛յս ծրագիրը տակն ու վրայ
ըրբեր է ռուս սպայակոյտը: Ձին-
ւորական շրջանակներու մէջ մէկ
մասը կը պահանջէ որ հայերը
զինեն, իսկ միւս մասը՝ հայերը
թողուլ համալրամական ֆօնա-
թիզմին զոհ գնալ: Թաթարնե-
րու կատարած ներկայ սարսափ-
ները նախաբանը կը համարուին
յիշած ծրագրին: Հայ ժո-
ղովուրդը հաստատ որոշած է
մինչեւ վերջին ծայր մաքառիլ
այս ստոր քաղաքակրթութեան
դէմ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Յուլիս 14 ին Պօլսէն կը հե-
ռագրեն հետեւեալը. Սուլթանի
հիմնած քննիչ յանձնախումբը,
իզէտ փաշայի նախագահութեամբ
պէտք է որ վաղը իր տեղեկա-
գիրք մատուցանէ Սուլթանի գէմ
սպանութեան փորձ ընողները
գտնելու կամ գոնէ անոնց հետ-
քերը գտած ըլլալու մասին: Մօտ
450 հոգի ձերբակալուած եւ հար-
ցաքննուած են, բայց ոչ մէկ
լուրջ փաստ գտնուած չէ, հա-
կառակ վրէժխնդրութեան հա-
մար եղած բազմաթիւ զրպար-
տութիւններու, մանաւանդ յոյ-
ներու կողմէն: Պօլսոյ յոյները,
մինչեւ անգամ բարձր շրջանակի
պատկանողներէն, բոլոր կաս-
կածները պուլկարներու վրայ կը
նետեն: Յոյն բժիշկ մը Մօլոճխե-
անս լրտես ու թուրք ոստիկա-
նութեան մատնած է պուլկար
տօքթօր Տինօֆը, վերատեսուչ
պուլկար գպրոցներու, բոլոր
վին անմեղ եւ այդ տեսակ գոր-
ծերու անընդունակ մարդ մը:

Մատ մը յոյներու պատճառով 30
հոգի պուլկարներ ձերբակալուած
են եւ դեռ ազատ չեն արձակուած:
Ազատ մնացած պուլկարներէն ոչ
մէկը տուն ը թողուն եւ չեն քն-
դունիր անոնց նամակները եւ
ծրարները: Յունական էնթրիգ-
ները պուլկարներուն դէմ վրդո-
վեցուցիչ են:

Կրթեալ թուրքերը, որոնք ոչ
իզուր կասկածի ենթարկուած են
պալատի կողմէն, փորձեր կընեն
յանցանքը հայերուն վրայ նե-
տել, աշխատելով հայ կոմիտէնե-
րու կողմէն կեղծ հաղորդագրու-
թիւն մը տարածել: Օտար դե-
պանատունները անմիջապէս

հասկցած են որ այդ հաղորդա-
գրութիւնը կեղծ է: Յոյներն ալ
Մակեդոնական կօմիտէի անունով
կեղծ յայտարարութիւն մը յանձ-
նած են դեսպաններուն: Թուրք
քաղաքական շրջանակներու եւ
հարցաքննիչ յանձնախումբին մէջ
ատ մանօվրաները լաւ կընդուն-
ուին:

Պարզ է որ շարժում մը կը
պատրաստուի բոլոր քրիստոնեա-
ններուն դէմ, ու դեսպանատու-
ններուն մէջ, ոչ այնքան անհիմն,
կսկսին վախնալ որ երկրորդ
փորձը մը ատեն քրիստոնեանե-
րու ընդհանուր կոտորած սկսի:
Նկատած են որ պայթումի միջո-
ցին ալպանացի զօրքերը անմի-
ջապէս իրենց հարցանները պար-
պած են օտարականներու քեօչ-
քին մէջ գտնուող հիւրերուն
վրայ: Պալատի պաշտօնեաները
անշուշտ տեղեկ էին գործին,
որովհետեւ պայթումը տեղի ու-
նեցած միջոցին անոնցմէ շատե-
րը տեղերէն չալժած չեն: Բացի
այդ պալատի ոստիկանութեան
բաժնին մէջ երկու շարժե ի վեր
կը խօսուի եղեր սպանութեան
շուտով ըլլալիք փորձի մը մասին,
իբր թէ պուլկարներու կողմէ,
ի՛նչեւ այդ մասին բան գրուած չէ
եւ ոչ ալ սպանուալիք եղած է:

— Յուլիս 13 ին Պօլսէն կը հե-
ռագրեն թէ Ալպանիոյ հետ հա-
ղորդակցութիւնը խզուած է. քա-
նի որ ալպանացիները հին Սեր-
պիոյ մէջ կոտորած սկսած են կը
կարծուի որ Աւստրիան այդ խնդ-
րին խառնուի:

— Իտալական կառավարու-
թիւնը խիստ բողոքագիր մը
յանձնեց է Բ. Իրան կարմիր ծո-
վուն վրայ տիւրքերու ծովահե-
նութեան համար:

Թ Ո Ւ Ս Ի Ա

Տօնի խաղախները այլեւս չեն
ուզեր ոստիկաններու պաշտօն
կատարել, անոնց պէտքերը ժո-
ղով գումարեր են եւ որոշում
տուեք են ցարին գիմել որ խա-
ղախները այլեւս չը գործածուին
իբր ոստիկաններ, որովհետեւ
ատ գործունէութիւնը իրենց
զինուորական արժանապատու-
թեան դէմ է: Վեջջերս խաղախ-
ներու ամբողջ զունդ մը հաւա-
քական հեռագրով իրենց գլխա-
ւոր հրամանատարին յայտարա-
րած է որ ներքին ոստիկանու-
թեան պաշտօն չը պիտի կատա-
րէ: Խաղախներու պնտերուն եւ
խաղախ գունդին այս քայլերը
Թեթերսպուրկի կառավարական
շրջանակներու մէջ ճնշիչ տպա-
ւորութիւն գործած է:

— Թիֆլիզի ոստիկանապետը
ուսմբով ոտքէն վերաւորուեք է:
փորձ ընող ձերբակալուած է:
— Թեթերսպուրկէն օտար

Թերթերուն ցարի եւ վիճելի կայ-
սեր տեսակցութեան մասին կը
գրեն. Յարը Բեթերգօֆ վերա-
գարձաւ գոհ եւ ուրախ, անոր
սպայակոյտին հօհէնցօլրէն նախ
վրայ յայտնած են թէ Վիլհելմը
կարծիք յայտնած է որ պատե-
րազմը շարունակուի մինչեւ յաղ-
թութիւն, իսկ ռուս ժողովրդին
բարենորոգումներ արուի գահէն:
Այդ մասին հիմա յարմար վայր-
կեանն է որով զեմսթօները
Մօսկուայի կօնգրէին մէջ
ինքզինքնին վարկաբեկեցին որ
է կարելիութիւն կուտայ օգգա-
յին համագումարումը յետաձգելու
Խօսակցութեան միջոցին երկու
կայսրներն մէկ քանի անգամ
հրաւիրեցին Ձիրչսքին որ եր-
բան Բեթերսպուրկի գերման
դեսպանատան խորհրդականը ե-
ղած է, ինչպէս Հուսօֆօլդ եւ Ջալօ-
ման բրօֆէսօրները:

**ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ
Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ**

Պատերազմէն կարելու լուրեր
չըկան. ճարտական լիազօրները
հասած են Ամերիկա. Վլադի-
վօսթօքի կանոնաւոր պաշարումը
սկսուելու վրայ է. ճարտական
զրահաւորները ծովը կը տիրա-
պետեն:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑ
ԱՄԻՐԻՍԱՆԵԱՆՆԻ
Ի Վ ա ո ն ա
Գլխաւորապէս Փրանսերէն լեղուով
— 0 —**

Պարտաւորիլ են նաեւ Հայերէնը
եւ Պուլկարերէնը, իսկ Գերմաներէնը,
Անգլիերէնը եւ պիսոն փափաքող
ներուն մասնաւոր պայմանով, Դպրո-
ցը կ'սկսի յառաջիկայ սեպտեմբերի
մէկին: Ամիսը 8 ֆրանք մէկ աշա-
կերաէն, Կան արգէն գիշերօթիկներ,
եւ մի քանիք ալ կ'ընդունուին: Այս
մասին զիմել երեքշաբթի, հինգշաբ-
թի եւ շաբթ օրը երեկոյեան ժամը
5-8, եւ կամ նամակով

Ա. ԱՄԻՐԻՍԱՆԵԱՆՆԻՆ.

Կ Վ Ա Ս Ի
Ը Ա Ն Ի
Ճ Ա Ո
Ի

Վառնա, կեղրոն փողօցի մը մէջ մէկ
ու կէս յարկով քարաչէն հաստատ
տուն մը շինուած 35 քառակուսի
մէթր տարածութեան վրայ, 245 ք.
մէթր պարագ հողով, Ունի 5 սեն-
եակ, մէկ խոհանոց, լուսարարան,
հոր եւ ամեն ինչ որ անհրաժեշտ են
ընտանիքի մը հանգստութեանը հա-
մար:

Փափագողը կրնան զիմել «Շարս»
ժուռի խմբագրութեանը:

